ԼԵՌԵՆՑ.—«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ»։ Ս. Պետերբուրգ, տպարան Սկորոխոդովի, 1890 թ., փոքր քառածալ 146 երես, գինն է 60 կ.։

Լեռենցի ոտանաւորների այս ա-ռաջին մեծ ժողովածուն ներկայացնում է մեր առաջ մի երիտասարդ բանաստեղծի, որի ստեղծագործութեան և մտածողութեան եղանակի մէջ կայ նորութիւն, կայ կենսական երակ։ Կարդալով Լեռենցին՝ դուք տեսնում էք մի մարդու, որ զգում է, մտածում է, ուրախանում է, տանջւում է, քարկանում է, օրհնում է, անիծում է։

Լեռենցի ոտանաւորների մէջ ամենուրեք դուք գտնում էք միտք, որոնումներ, ձգտումներ։ Սակայն միտքը յաճախ դուրս է գալիս իւր սովորական ընթացքից և դառնում է փոթորկալից, երերուն և հասնում է անբնական եզրակացութիւնների, որոնք կրում են տեղ-տեղ փխրազգացութեան, իսկ տեղ-տեղ վայրենի կատաղութեան կնիք իրանց վերայ։ Բայց ինչպիսի հոսանք ընդունելու լինի այդ մտածողութիւնը, սխալ թէ ուղիղ, նա նեւրուած է մեծ մասամբ մարդկայնութեան, մարդկային տանջանքի, լացի և աղաղութեան կարօտի պատկերացնելուն։

Լեռենցը ինքը իւր ոտանաւորները անուանում է կեանքի մրմունջներ, սրտի ցաւ ու սէր։ Բայց աւելի լաւ է նորա սեփական բառերով խօսենք։

Վաղուց մոռցած մէկ անկիւնում
Հիմա վերցրի ձեզ, թերթեր,
Ով մրմունջներ կեանքիս տրտում,
Երդեր—սրտիս ցաւ ու սէր։
. . . . . .
Դուցէ ձեր մէջ մէկը գտնել
Ծանօթ իւր միտքը կարենար,
Դուցէ միւսը իւր հարազատ
Զգացումները լուռ կարդար
Եւ մրտաղբաղ աչքով նա չատ
Բոպէ ձեզ վրայ ախուր մնար.
Կամ թէ դուցէ դառնն ժամին
Մէկը ձեզնով ըսփոփուէր,
Պարտքի, գեղի և ճշմարտին
Անունն լիշէր սիրանուէր...
Գնացէք, թերթեր, և ձեռից ձեռ
Անցէք և ձեր ձայներով
Ներշնչեցէք կեանքն լոյս ու սէր
Աղատ ոգի նուիրելով.
Եւ մարդերից գարշ ու տրտում
Նրանց դիմակը պոկեցէք։
Գերմարդկայինն մարդկայինում
Որոնեցէք և գտէք.. (երես 9—10)։

Նա նուիրել է ժամանակակից կեանքին և երիտասարդութեան մի քանի ոտանաւորներ, որոնց մէջ պախարակում է թէ երիտասարդութիւնը և թէ նորան շրջապատող կեանքը։ Նա գտնում է երիտասարդութիւնը ոչ իւր վեհ բարձրութեան վերայ կանգնած, ոչ այն գործերի գլուխ ու կատարող հանդիսացած, որ նորա վաղուց ըղձացածն է։ Եւ կարծես թէ առհասարակ՝ հեղինակը հակած է շրջապատող կեանքը, ժամանակակից մթնոլորտը մեղադրելու։ Նորա համար երիտասարդութեան ազնիւ զգացմունքների դոյութիւնը անկասկածելի, անուրանալի է. նա այն կարծիքին է, որ երիտասարդութիւնը մեծ գործ կը կատարէր, եթէ շրջանը նորան դիւրութիւն տար։

Գենելով երիտասարդութեան կեանքը նա տեսնում է, որ նա իւր ապրելու առաջին օրերից իսկ, չէ գլուխնում իւր զարգացումի, իւր զգացումների արտայայտութեան, իւր նպատակների իրագործելու համար պայմաններ։

Դեռ սկսած մանկութեան ոսկէ օրերից՝
Երբ ժպիտն է բաց և ձայնը՝ հընչուն,
Արցունք հոսեցրել են իմ աչքերից,
Խեղդել են կրծքումս ձայնս դողդոջուն,
Հազիւ մէկ անմեղ լափշտակութիւն
Տիրում էր ինձի, ես լսում էի
Արդէն այլերից լանդիմանութիւն,
Եւ մեղանչել զգացումս չտապում էի.
Իմ պատանեկան ջինջ անուրջներս
Եւ բուռն ու մաքուր ցանկութիւններս
Մարդիկը պոկում էին բողբոջից
Իրենց ծաղրովը վատ ու ժահրալից (երես 12)

Քանի որ երիտասարդութեան առաջ բացուց աւելի գիտակցաբար կերպով մեծ նպատակների և գաղափարների ծառայելու ցանկութիւն ու պատրաստականութիւն, սկսեց երկայն և տանջող մարտ ու կռիւ, որ կանգնեցնում էր երիտասարդութեան։

Բաց դրաւած փայլով մեծ նպատակի
Սեփական կեանքի զօրութեամբ անլաղթ,
Հաստատ քայլերով կրկին դիմեցի
Դէպի ցանկացած մարտն ու դէպ բաղդ...
Եւ լաղթեցայ... (երես 13—14)

Այս տեսակ դատողութիւններից յետոյ հասկանալի են բանաստեղծի դէպ իւր խիղճը դարձրած խօսքերը՝

Սիրտ իմ չարչարուած, մի լանդիմանիր,
Որ թառամում եմ մենակեաց, թշուառ.
Ոչ ես,—այլ մարդիկն և կեանքն են պատճառ,
Ոչ ես,—մեղաւորն աշխարհն է պատիր (երես 12)։

Աշխարհը սակայն չի զգում իւր դրութիւնը, չի զգում այն բանը, որ նա ճնշում է ուրիշին, կամ գոնէ չի մտատանջւում, չի խղճահարւում այդ ճնշելուց. մարդ շարունակում է բուսական կեանքով ապրել և իբրև արարած ուրախանալ այդ օր օրին լաջողող կենցաղավարութիւնով։ Բանաստեղծը կատաղում է այդ տեսարանից.

Տեսնում եմ դէմքեր, զարթ, անհոգի,
Անցեալն մոռացած և ապագայի
Մասին էլ անհոգ.—որպէս նրանք ժպտում,
Որպէս նրանք ապրում գոհ ու անտրտում,
Եւ ուզում եմ նրանց բռնել, կանգնեցնել
Ժահրալիր (?) սրտով նրանց դէմքին գոչել՝
Ասացէք, ուր էք ուղղում ձեր քայլեր,
Ինչի է պէտք մեծ աղմուկը ձեր։
Անդիտակցական դուք դերասաններ
Մարդկային կեանքի կատակերգութեան՝
Սէրը դարձրել էք մի խաղ ծաղրական,

Սուրբը անպատուել էք լեզուով չարանենգ,
Ճշմարտութեան դէմ դիմակն է ձեր զէնք...
Դեղեցիկը դարձրել հեգնութիւն տխուր
Եւ բոլորը մէկ տեղ զաղիր առատուր... (երես 53)։

Բայց բանաստեղծը գիտէ, որ կայ և կարող է լինել մի ուրիշ կեանք, աւելի խելացի, երջանիկ, աւելի մարդկային.

Փալլում է ապագան ըղձալի տեսքով,
Այնտեղ մարդերը ախտերից մաքուր՝
Կապրին հաւասար ու հեղահամբոյր,
Այնտեղ մարդկութեան ներկայ չարչարանք
Կը ստանայ աւարտ, գտած գեղ ու սփոփանք.
Այնտեղ կը դաղարէ ոխը նենգաւոր
Եւ լոյսը կը ալրէ անլաղթ փառաւոր (երես 53)։

Այդպէս մի ապագայի, այդպէս մի լուսաւոր կեանքի համար արժէ մարտնչել, արժէ զոհուել, արժէ ժամանակակից կեանքի ծանրութիւնները տանել։ Այդ ապագայի լոյսն է, որ թելադրում է բանաստեղծին, թէ

. . . . . ուզում եմ ապրել,
Ուզում եմ ես մարտ, ուզում եմ գործել,
Միտք ու տանջանքով դըրաւել հոգիս.
Սէր, վիշտ, տրտմութիւն—բաժին իմ սրտիս,
Եւ այդ կատաղի փոթորիկներում
Կեանք ու հոգու այդ աղմուկներում,
Որպէս մրրկից յետ նաւակ մի տըկար
Անշուշտ կը գտնեմ հանգիստ ինձ համար (երես 54)։

Եթէ միայն ամբոխի անհոգ առօրեայ կեանքը լինէր երիտասարդութեան սիրտ ցաւացնողը, այդ դեռ չէր դրգիռ մարդկանց մեծ ոգեորութեամբ և ուժգնութեամբ մարտի դուրս գալու և զոհուելու, բայց ներկայ երիտասարդութեան առաջ դրուած են բացի դա ուրիշ սրտամաշ խնդիրներ, աւելի թանկագին շահեր։

Ոտանաւորների մի մասը նուիրուած է բնութեան նկարագրութեան՝ թէ հայրենի հողում և թէ արտասահմանում, որտեղ ըստ երևութին ապրել է հեղինակը։ Հայրենիքի նկարագրութիւնները՝ թէև դրուած են ոգեորութեամբ, բայց նոքա բաւականաչափ ուժեղ չեն։ Կարծես թէ հեղինակը մի տեղի, մի գիւղի տպաւորութիւնները ընդհանրացրել է հայրենիքի և միւս մասերի վերայ։ Իրականութիւնից հեռու լինելուն վկայ են Մասիսի և նորա շրջակայքի մասին ակնարկութիւնները։

Պէտք է նկատել, որ և նկարագրութիւնների մէջ՝ հեղինակը չաճախ մնում է հասարակական անձնաւորութիւն, որ կատարելատիպեր է որոնում, որ ներդաշնակութիւն է պտտում մարդու և բնութեան մէջ։

Ուշադրութեան արժանի գրուածք է այդ կողմից Լեման ոտանաւորը։ Լեմանը—ժընեվի գեղեցիկ լիճն է.

Հրաշալի ես դու, օ Լեման,
Գեղեցկութեամբ քո չքեղ,

Քո զմրուխտէ ջրով աննման
Ափերովդ պերճ ու գեղ։
Ողջոյն վճիտ ալիքներիդ,
Նրանց մնդմասահ խաղերին
Որ ցօղում են գեղափթիթ
Եզրները հանդարտին։
Լուսինն անդորր ջրից երեսին
Ցոլանում է գեղաբար։
Աստղեր լողում են նրա միջին
Ամպերն խմբով սիրահար
Նրա մէջը մեղմ օրօրւում,
Կապոյտ երկինքը նրան ժպտում...

Նկարագրութիւնը շարունակւում է, ինչպէս հրաշալի է Լեմանը։ Բայց բանաստեղծը իւր նկարագրութեան մէջ յանկարծ կանգ է առնում.

Բայց այն ինչ է, չքնաղ Լեման,
Որ դարերի ընթացքում
Կերպարանքով չարանման
Խոժոռ, համր ու տրտում
Այնտեղ ունես քո գրկում։

Այն ինչ է, որ խանգարում է գեղեցիկ լճի ներդաշնակ լաւ տպաւորութիւնը, այն ինչ է, որ բանաստեղծի ուրախութիւնը փոխարկում է տխրութեան։

Նա է Շիլլիօն ապարանը,
Վրկան մարդկանց բռնութեան,
Թշուառութեան բնակարանը
Զարչարանքի օրօրան։
0 Շիլլիօն, քո պատերում
Որքան մարդիկ զոհ եղան
Գոռ մեծերի բռնութեան (եր. 40)։

Իբրև նկարագրական մի ոտանաւոր՝ լաւ է «Յունգֆրաուն» (երես 18—20), *որտեղ նկատւում են թարմ տպաւորութիւնների հետքեր։ Քիչ են այլաբանական ձևով գրուածքներ։ Նոցա մէջ աչքի է ընկնում «Արմաւենին»* (երես 132—133)։

Բերած օրինակներից, որ մագրախօսական մի նկատողութեան համար աւելի քան բաւական պէտք է համարել, տեսնում է ընթերցողը, որ պ. Լեւենցի ոտանաւորները իրանց մէջ պարունակում են հետաքրքրական դալլալիկներ, մտքի ելևէջներ։ Հարկաւոր եմ համարում աւելացնել, որ, բացի այդ, գրքի մէջ կան ուրիշ հետաքրքրական ոտանաւորներ, որոնցով հեղինակը արտայայտում է իւր հայրենասիրական զգացմունքները, փիլիսոփայական հայեացքները։ Ջը նայելով այդ բոլորին. սրտի ցաւով պէտք է յայտնեմ, որ պ. Լեւենցի ժողովածուն չի գտնիլ մեծ ընդունելութիւն մեր հասարակութեան ընթերցող շրջաններում, կը մնայ անուշադիր, չը կարդացուած, շնորհիւ հեղինակի մի քանի առանձնայատկութիւններին, որոնցից մէկը նորա դործածած լեզուն է։

Եթէ խնդիրը վերաբերւէր այն բանին թէ ինչ ուղղագրութիւն է ընդունուած՝ ու թէ ւ և վ, ո թէ օ, կամ ինչ ձևեր են պահպանուած՝ Նորա թէ Նրա, Վրա թէ Վերայ և այլն, ես չէի կիշատակիլ անգամ բանաստեղծութեան մասին խօսելուց. բայց այն լեզուի խնդիրը, որ ես եմ շօշափում, վերաբերում է լեզուին, իբրև մտքի արտայայտութեան միջոցի, նորա կազմութեան և ոճին։ Դարեբաղդաբար իմ վերև բերած օրինակներում լեզուն դեռ բաւական յաջող էր, ոճը այնքան թեթև, որ ես կարողացայ ընթերցողին ծանօթացնել ոտանաւորների բովանդակութեան և նոցա իմաստի հետ։ Մինչդեռ գրքի հետ անմիջապէս գործ ունեցողը՝ կարող

է ձանձրանալ մի քանի օրինակներից և գիրքը թողնել անուշադիր։

Գիրքը սկսում է հետեւեալ ոտանաւորով։

Նախ քան աչքով դու հետեւես սրտատրոփ
Զգացումներիս, մտքերիս՝
Կաց, կին սիրած դու սրտիս,
Կաց և թող ինձ ասել մի խօսք վերստին,
Գուցէ այդ խօսքն սրտիս խորից՝ բազմավէր
Դարձեալ գաղտնիք, դարձեալ մի ճիչ ցաւագին
Գոկէ լանդուգն, անհամբեր,
Գուցէ ձայնով անխոնարհ
Խուռն ամբոխի աչքից թագցրած անդադար
Երջանկութիւնն մեր միութեան
Նա մատնէ
Եւ դժգոհ՝ ինձ կշտամբէ։
Թող. այն գաղտնիք և այն ճիչը մորմոքիչ
Սիրուս գաղտնիքն է ու ճիչ։
Երբ որ բուռն փոթորկում է իմ հոգիս՝
Նա կը մնդմէ նրա տանջանք
Եւ երբ սուգն իմ սրտիս,
Որ օժիտ է ինձ մարդերից, չարչարանք
Տարակուսանք ինձ տալիս (?),
Նա կը վանէ նրանց, նեիրելով ինձ հեշտանք... (երես 3)։

Տեսէք, որչափ ժամանակ և ջանք է հարկաւոր այս գրուածը հասկանալու։ Եւ դեռ խնդիր է՝ թէ երկու ընթերցող միակերպ կը հասկանան միտքը. դորօրինակ ինչ բանին է վերաբերում «սրտատրոփ» խօսքը— «հետեւես» բառին, թէ «զգացմունքներիս»։ «Անդադար» բառը, որ վերաբերում է երևի «թագցրած»-ին, խանգարում է մտքի անմիջապէս ըմբռնելը։

Ոլորածոյ բառահիւսութիւնից լաճախ կորսւում է գրուածքի միտքը. մարդ ստիպւած է լինում մի քանի անգամ լետ կարդալ, իսկ այդ բանը արդէն նւազեցնում է բանաստեղծութեան արժէքը։ Բանաստեղծական գրուածքները ունեն իրանց պահանջները ձևի վերաբերմամբ։ Բանաստեղծական միտքը՝ պէտք է և բանաստեղծական արտայայտութիւն ստանայ, որպէս զի նա իւր դերը կատարի։ Այդ պատճառով անչարմար են այնպիսի հանգոյցներ, որոնք կանգնեցնում են ընթերցողի մտքի և երևակայութեան գործողութիւնը և այնպիսի բառեր, որոնք աններդաշնակ են հնչում մարդի ականջին։ Զորօրինակ՝ վերև բերած օրինակում աններդաշնակ են «ճիչ մորմոքիչ» բառերը, «սրտատրոփ», «ամփոփ» վերջաւորութիւնները. միտք սխալեցնող է «հեշտանք» բառը...

Ուրիշ տեղերից ևս բերեմ մի քանի օրինակներ, որտեղ կամ միտքը լինի խառն, անհասկանալի, կամ նոցա արտայայտելու ձևը անչարմար.

Որպէս մի դև խոժոռադէմ
Ցուսահատւած աշխարհից,
Սիրտս ճնշւած ցաւով դժխեմ (!)
Հոգիս մըռայլ թողնալից—,
Ես թափառում էի մենակ
(երես 15)
Եւ վրսեմական (!) լռութեամբ պատած
Նա անկնճիռ (!) է. անտրտունջ,
անլաց... (երես 17)

Սուլիր. Թռչիր, սողուն, արագ
Տար մեզ անցեր հեռաւոր,
Տար մեզ խորոշ (!) և դէպ առուակ
(երես 21)
Ելնում է որոտը՝ երկիր շարժելով,
Շանթեր արձակում նա՝ արցունք
թափելով...
(Վարդանը) նայում է բոլորը
քանդւած.—
Այնտեղ շուտ թագնւում է գարշ
օձը վախցած... (եր. 26—27)

Օձը անձրևի ժամանակ դեռ. միթէ պէտք է սպասէր Վարդանի երևալուն, որ յետոյ թագցւէր.

Այլ հողն է ողբում լուռ, որտեղ է
անկանգ (!)
(երես 27)
Հոգիս օրօրւում չքեղ ամպալին (!),
Ալիքների վրայ, նուրբ, մեղմ
մրմնջում
Սէր, բաղդ ու անուրջ և կամաց
նիրհում
(երես 57)
Ինչու համար մկնաձգտիչ (!) ցըն-
ցումներ
Նրան չարչարում, նրան տանջում
են մահաբեր
(երես 59)
Իմ սենեակիս օդը թըւում է խեղ-
դիչ (!)
Չորս պատերն էլ իրանց խլու-
թեամբ են նեղիչ (!)
(երես 85)

Այլ ես չեմ խօսում զանազան օտարօտութիւնների մասին այս տեսակի՝ փոխանակ ասելու «վառերից թքւած» գործ է ածւած «վառերով թքնւած» (երես 59), փոխանակ «դու իմանաս» գրւած է «քեզ իմանալ» (երես 43) «լայնածաւալ ծառեր» (երես 85), հեշտանք, թափառանք, կախարդանք և այլն.

Բաւականանալով օրինակների այս չափով՝ շեշտում ենք դարձեալ, որ եթէ այս և սոցա նման սխալները և անյարմարութիւնները ցանկալի չեն մի հասարակ գրւածքում, նոքա բոլորովին փնասակար են բանաստեղծական հեղինակութիւնների մէջ.

Առհասարակ ցաւալի է, որ մեր հեղինակը իւր մտքերի արտայայտութեան ոճերում հեռու է ժողովրդական բանաստեղծական ոգուց. գրում է շատ բարձր ոճով, խօսում է արիստոկրատական ձևերով, գործ է ածում շատ խրթին, սակաւ լսւած բառեր.

Բացի լեզուի, ոճի պակասութիւնից հեղինակը տալիս է և մտքի հակասութեան, անկատարութեան օրինակներ. Հեղինակը մի քանի տեղ կարծես ստիպել է իրան, որ զգացւի և ընկնի է կամ բունի զգացմունքների և կամ սանտիմենտալիզմի աշխարհքը, իսկ երբեմն ընկնում է անառողջ մտածողութեան ուղին. Իբրև օրինակ այս վերջինի՝ ես պէտք է է մատնացոյց լինեմ «Դաշոյն» ոտանաւորի վերայ. Այդ ոտանաւորում հեղինակը մտադրութիւն ունի դրւատել դաշոյնը, իդէալացնել նորան և հասնում է անհեթեթութիւնների.
(երես 23)

Վերջացնելով խօսքս պ. Լեռենցի ոտանաւորների այս առաջին մեծ ժողովածուի մասին՝ կրկնում եմ, որ նա, իբրև նոր ստեղծագործութեան նմուշ՝ շատ հետաքրքրական է և ցանկալի. որ նա տալիս է մեզ մտածւած և զգացւած երեսներ, բոլորովին արժանի գրականութեան կողմից ողջունւելու. Բայց հեղինակը պէտք է մեծ ուշադրութիւն դարձնի իւր լեզուի, իւր գրելու ձևի վերայ, և տալի ոտանաւորները մեծ զգուշութեամբ, զոհելով այն բոլորը, ինչ լաւ մտածւած չէ, ինչ կարգին ձևակերպւած չէ.

Գէ.